Հավելված N419
էկոնոմիկայի նախարարության
գլխավոր քարտուղարի
2019 թ. հուլիսի 26 -ի N 636-Ա հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԻՆՏԵԳՐԱՑԻԱՅԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԵԱՏՄ ԵՎ ԱՊՀ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՄԱՍՆԱԳԵՏԻ

1.Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) առեվտրի և ինտեգրացիայի վարչության (այսուհետ՝ Վարչություն) ԵԱՏՄ և ԱՊՀ համագործակցության բաժնի (այսուհետ՝ Բաժին) մասնագետի (ծածկագիրը՝ 23-32.11-Մ6-1)

1.2. Ենթակա և հաշվետու է

Բաժնի մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Բաժնի մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի ավագ մասնագետը:

1.4. Աշխատավայրը

Հայաստան, ք.Երևան, Կենտրոն վարչական շրջան, Միհեր Մկրտչյան 5

2.Պաշտոնի բնութագիր

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1. մասնակցում է Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության շրջանակներում ընթացող գործընթացների համալիր հետազոտությունների, վերլուծությունների, գնահատումների ու կանխատեսումների իրականացմանը և դրանց արդյունքների հիման վրա ոլորտի զարգացման քաղաքականության մշակման և իրականացման ուսումնասիրության աշխատանքներին,
2. մասնակցում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Կոլեգիայում և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Խորհրդում քննարկվող հարցերի վերաբերյալ հայկական կողմի դիրքորոշման ձևավորման և ներկայացման աշխատանքներին,
3. մասնակցում է Եվրասիական տնտեսական Բարձրագույն խորհրդի և Եվրասիական Միջկառավարական խորհրդի օրակարգերում քննարկվող հարցերի վերաբերյալ Նախարարության դիրքորոշման ձևավորման և ներկայացման աշխատանքներին,
4. մասնակցում է Եվրասիական տնտեսական միության մասին Պայմանագրում փոփոխություններ կատարելու մասով ԵԱՏՄ անդամ պետությունների միջև քննարկումների կազմակերպմանը,
5. մասնակցում է Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության շրջանակներում առևտրային քաղաքականության իրականացմանը, մասնավորապես՝ երրորդ երկրների հետ ազատ առևտրի գոտու ստեղծման և առևտրատնտեսական համագործակցության մասին համաձայնագրերի,

հուշագրերի և դրանցից բխող միջոցառումների մշակման աշխատանքներին,

6. մասնակցում է ԱՊՀ համագործակցության շրջանակներում առևտրային քաղաքականության, մասնավորապես՝ «Ազատ առևտրի գոտու մասին» Պայմանագրից բխող միջոցառումների մշակմանը և իրականացման աշխատանքներին:

Իրավունքները՝

- համապատասխան մարմիններից և Նախարարության կառուցվածքային ստորաբաժանումներից ստանալ Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության շրջանակներում անհրաժեշտ տեղեկատվություն և նյութեր,
- Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Կոլեգիայում և Խորհրդում քննարկվող հարցերի վերաբերյալ հայկական կողմի դիրքորոշման, ինչպես նաև Եվրասիական տնտեսական Բարձրագույն խորհրդի և Միջկառավարական խորհրդի օրակարգերում քննարկվող հարցերի վերաբերյալ նախարարության դիրքորոշման ձևավորման և ներկայացման համար շահագրգիռ մարմիններից և նախարարության կառուցվածքային ու առանձնացված ստորաբաժանումներից ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն և նյութեր,
- ստանալ համապատասխան տեղեկատվություն և նյութեր շահագրգիռ մարմիններից և գերատեսչություններից առևտրային քաղաքականության, մասնավորապես՝ «Ազատ առևտրի գոտու մասին» Պայմանագրից բխող միջոցառումների արդյունավետ իրականացման վերաբերյալ՝ ԱՊՀ համագործակցության շրջանակներում:

Պարտականությունները՝

- ուսումնասիրել համապատասխան մարմիններից ստացված Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության շրջանակներում անհրաժեշտ տեղեկատվությունը, նյութերը և այլ փաստաթղթերը,
- նախապատրաստել առաջարկություններ բարենպաստ առևտրային ռեժիմների ձևավորման հեռանկարային և առկա շուկաներ մուտք գործելու խոչընդոտները վերացնելու ուղղությամբ միջոցառումների իրականացման հետ կապված աշխատանքներին մասնագետներ և փորձագետներ ներգրավելու վերաբերյալ,
- նախապատրաստել առաջարկություններ՝ արտաքին շուկաների ուսումնասիրման և տեղական արտադրողների համար արտաքին շուկաների հասանելիության, ինչպես նաև արտահանման խթանման վերաբերյալ,
- Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Կոլեգիայում և Խորհրդում քննարկվող հարցերի վերաբերյալ հայկական կողմի դիրքորոշման, ինչպես նաև Եվրասիական տնտեսական Բարձրագույն խորհրդի և Միջկառավարական խորհրդի օրակարգերում քննարկվող հարցերի վերաբերյալ նախապատրաստել առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր, պարզաբանումներ, ուղեցույցներ և այլ փաստաթղթեր,
- ուսումնասիրել Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության աշխատանքների իրականացման նպատակով համապատասխան մարմիններից

ներկայացված անհրաժեշտ հիմնավորումները, կարծիքները և այլ տեղեկատվությունը,

- կնքված ազատ առևտրի մասին համաձայնագրերի, ինչպես նաև ԵԱՏՄ անդամակցության պայմանագրից բխող պարտավորությունների շրջանակներում ուսումնասիրել և վերլուծել համապատասխան շուկաները՝ հայրենական ապրանքների մրցունակությունը և ներկայացվածությունը ապահովելու նպատակով,
- ներգրավվել ԱՊՀ համագործակցության շրջանակներում առևտրային քաղաքականության, մասնավորապես՝ «Ազատ առևտրի գոտու մասին» Պայմանագրից բխող միջոցառումների իրականացման աշխատանքներին:

3.Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառումը

Աշխատանքային ստաժ չի պահանջվում:

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաները

1. Հաշվետվությունների մշակում
2. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
3. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ

1. Փաստաթղթերի նախապատրաստում
2. Ժամանակի կառավարում

4.Կազմակերպական շրջանակը

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքներին մասնակցության, որոշակի մասնագիտական գործառույթների իրականացման համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքներին մասնակցության, որոշակի մասնագիտական գործառույթների իրականացման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի ազդեցություն կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքներին մասնակցության, որոշակի մասնագիտական գործառույթների իրականացման շրջանակներում:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասության շրջանակներում շփվում է տվյալ մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ, ինչպես նաև տվյալ մարմնից դուրս որպես ներկայացուցիչ շփվում է պատվիրակված լիազորությունների շրջանակներում:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում մասնակցում է մասնագիտական խնդիրների բացահայտմանը և այդ խնդիրների լուծման մասով տալիս է մասնագիտական առաջարկություն: